նամոլեռանդ պաշտողներիցն էր: Նա էր հռչակում կանանց հասարակութեան մէջ, թէ որպիսի հրաշալի ներգործութիւններ էին անում իր ամուսնի կախարդական թղթերը: Նա էր տարածում լուրեր, թէ այսինչ եւ այնինչ տիկինը որպիսի բախտի հասաւ տէր հօր կախարդութիւնների շնորհիւ: Այսպիսով աւելանում էր վարժապետիս յաճախորդների թիւը:

Որդին — Ստեփանը — վարժապետիս երեխաների անդրանիկն էր. դա մի սիրուն տղայ էր, որ ամենեւին նման չէր մօրը: Միշտ լուռ, միշտ, մունջ, գունաթափ դէմքով եւ մարած աչքերով Ստեփանը մի ապուշ երեխայ էր: Չէր կարելի առանց խղճալու նայել նրա երկչոտ երեսին: Նրա հետ խօսելու ժամանակ ես միշտ նկատում էի, որ առանց պատճառի ժպտում էր, ծիծաղում էր, արձակում էր մի քանի անմիտ, անկապ խօսքեր եւ իսկոյն գժի նման փախչում էր, վախենալով, չիցէ թէ իրան ծեծէն: Խեղճը ցնորոած էր: Երբեմն ամբողջ գիշերներ անցուցանում էր նա անհանգիստ զառանցութեան մէջ, շատ անգամ քնած տեղից վեր էր թռչում եւ անգիտակցաբար գնում էր, ուր որ հանդիպում էր: Այս պատճառով նրան կապում էին: Հօր բոլոր կախարդական հնարները, որոնք ուրիշների վրայ հրաշալի կերպով ազդում էին, բոլորովին անզօր մնացին գեղեցիկ Ստեփանի առողջութիւնը վերականգնելու, խեղճը մնաց միշտ խելագար: Որքան ճիշտ էր, ես չգիտեմ, միայն պատմում էին, թէ նրա խելագարութեան պատճառը եղել էր նոյնիսկ հայրը: Ստեփանը ինձ նման չար եւ անհանգիստ տղայ էր. մի օր, հայրը բարկանալով նրա վրայ, կամեցել էր «խրատելէ եւ այս պատճառով կախ էր տոել ջրհորի մէջ, — ասում էին, այն օրից խեղճ Ստեփանին պատահել էր այդ դժբախտութիւնը: Պատմում էին, որ դեւերը այնտեղ զարկել էին Ստեփանին, որովհետեւ ջրհորը միշտ լիքն է լինում դեւերով: Բայց լինում էին օրեր, որ Ստեփանի խելքը գլխին էր գալիս, նա խիստ քաղցր եւ բարի երեխայ էր դառնում. մենք ամենքս ուրախանում էինք եւ սիրում էինք նրան:

Աղջիկը — Սոնան — նոյնպէս լուռ երեխայ էր, եւ չնայելով իր փոքրիկ հասակին, կատարում էր տնային շատ գործեր: Սոնան կրում էր եղբօր հեզ, հանդարտ եւ մուգ-երկնագոյն աչքերը, այն զանազանութեամբ միայն, որ քրոջ աչքերը աւելի պայծառ եւ կենդանի էին, մինչդեռ եղբօրը՝ բոլորովին կորցրել էին իրանց կենդանի փայլը: Սոնայի ծամերը նոյնպէս աւելի մուգ գոյն ունէին, քան եղբօր շէկ, մետաքսանման մազերը, եւ աւելի խիտ էին, քան թէ նրանը: Զարմանալին այն էր, որ այդ երկու երեխաներից ոչ մէկը նմանութիւն չունէր ոչ հօր հետ, որի կերպարանքի մէջ կային մի քանի որոշ մոնգոլական գծեր, եւ ոչ նման էին մօրը, որի դէմքը վախեցնելու չափ տգեղ էր: